դէր պիտի սփռուին քեզի համար և խաչած դկուղները քաղցրահոտութիւն պիտի բուրեն։ Մինչդեռ արմաւները և կարագը պիտակից վրայ են, ծուժկալէ ու մտածէ խողխողեալ նոխազը։ Երբ ուտես և օճառով մաքրուիս՝ կընայ քեզի հարցընել Թէ ուր կը բնակիմ ես. ըսէ. Եուսուֆ Թշուառութեան և ցաւոց մէջ կը բնակի. քանի որ աղդարարութեանցդ ականջ չդրաւ՝ չգտաւ երջանկութիւն, իր բարիքը անհետացաւ։ Ոչ տեգերը և ոչ Թինամիք յափշտակեցին զանոնք, այլ պատժուեցաւ քու խրատներուդ անմոռաղիր ըլլալով։ Աստուած պիտի լացընէ գործերը, եղբայր իմ. իրեն օգնականութիւնը միշտ հետդ պիտի ըլլայ. եթէ դու միայն մը նաս ինծի, ով եղբայր, ես դեռ հարուստ եմ։ Ո՛վ բաղդ, ուղեկից եղիր անոր քայլերուն. կանաչութիւնը և արմատները[1] ձմեռն անգամ կ՚աճին իրեն առջև և իր հօտը կը կշտացընեն։ Երբոր աղօթք կ՚ընես՝ անհատնում գովեստներ ուղղէ առ Աստուած, ծառոց պտուղներուն, հօտիդ բուրդերուն չափ»։

Պէտէվին այս քերթուածեանս համար շատ ընծաներ ընդունեցաւ, և իրեն թշուառութենէն ազատեցաւ։

1 Արմատ ըսելով գէմմայէն կ՚իմանայ։

ՄԻՋՕՐԵԱՑ

Ի միջօրեայ օգոստոսի,
Արեւակէզ բնութիւն կասի.
Լուռ արտորայք, լուռ են մայրիք,
Ջուրք պաղպաջունք ի քուն քաղցրիկ։
Փափուկ ամպեր ի բարդ ի բարդ
Վերուստ հովտաց ձերգին ի զարդ.
Ի սիզաւէտ հօտք ի սարակ՝
Ցախորժ ըստուերս առնուն ճարակ։
Ի՛ր յունիս այլ ազդ երեւիր
Ջրաարթ ժամուք ու ի զով զեփիւռ.
Հողմն անդ թեթեւ դրդուէ ղծաղկունս,
Անտառք ի կայթ, լուրք ի դրդմունս։
Անդ ի մարմանդս առուակք հընչեն
Ի լօտաբոյս ժայռից ամեն.
Եւ նըւագաց հրծծիւնք նրբրբին
Ի փունջ զանխուլ ծաղկանց լըսին։
Իսկ աստ ի սուգ տարօրինակ
Պատեալ թըւի օգոստ համակ.
Լուռ կան երկինք, մեռեալ բնութիւն.
Վեհին միայն կեայ օրհնութիւն։—
Օ՛ն անդր յինէն հող եւ փոշի,
Մի՛ եւս քըրտանց եղէց գերի.

Այլ ընդ եմակս եւ ընդ անտառ
Աղատօրէն առից թափառ.
Անդորրաւէտ ընդ պարզ երկնիւք,
ի բոյս ի հողմըս քաղցրասիւք,
ծանմեղ խաղաղ արարս հաստչին՝
Հաղորդ հեշտից գոլ անմեկին։
Ե՛կ, զի նկատեմ յաչսըդ գողտրիկ
Ջծածուկ սըրտիդ խորհուրդ հեզիկ.
Ե՛կ, եւ ի պրակս աստ մենաւոր
Ջերծ ի գրաղմանց կացցուք մի օր.
Ուր ի գալար մարգագետին
Ճօճան ըստուերք թաւ անտառին,
կապոյտ ծաղկամբք՝ զոր հատաքես՝
Աչկունքըդ խաժ փայլեն մեծ եւս։
Ե՛կ.— երբ յանդորը յայս առնես դարձ՝
Անոյշ դիմացդ արարից այց.
Դաշտորէից տեսլեան ի գեղ
Առցուք գըրոյց ախորժ անմեղ։
Աստ ընդ անչարժ չըքուվս հանգիր,
Ընդ լուռ ծործորս կալով յակճիռ.
Ցես զելեւէջ բլըրոց գալար
Եւ հիացիր 'դ անձայնն ամառ։
Ի վեր տարեալ ըղդագաթունս
Անշարժ կան ծառք, եւ հաւք ի քուն.
Կոփեալ գըրչաւ յանշունչ ժայռէն
Կարծէ՝ որ զայնս գամ մի դիտէն։
Ի խաղաղիկս եւ լուռ պատկեր
Պըշնու եւ լեառըն մենասէր,
Թէ ձայն լինչ մեղմ յուղխից, մեղուաց՝
Ջերդ շունչ քընոյ հարցի յանկարծ։

ՊՐԱՑԷՆԴ

ՎԵՆԵՑԻԿ Ի ՑՊԱՐԱՆԻ՝ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ